ըէն· Տաւիթը խաբար չունէր: Սամախօսն պղինձ շուռ տուին Տաւիթի վերէն, Տաւիթի կըլէօխ խաշուեց, մեռաւ: Խանդիւթ խանըմ թողեց կընաց Սաննայ տուն, Տաւիթի ծին, գուռզ, թուր կեծակին, Մշու Սուլթան առեց, տարաւ ինոր տարէն:

140 Արևելից Թագաւորի աղջիկ.

Քեառսուն ճող ծամ — Սանասար   Բաղտասար — Թագաւորի աղջիկ

Մհէր — ?   Ձէնով Յէօվան — Գիոհար· Վիրգօ, Վարդան

Թլէօլ Տաւիթ — Խանդիւթ

Մհէր

ՅԱՒԵԼՈՒԱԾ.

1. Յ. Աւչեանը հրատարակում է «Վաթան և Սասուն» անունով մի պատմուածք, որի յառաջաբանից մենք քաղում ենք Ջաջանց տան Սասմայ ծռերի վերաբերեալ ժողովրդական աւանդութիւններ, որ նա լսել է սասունցիներից:

2. Կիլիկիայում խռովութիւն է ծագում. այդ տեղից խոյս է տալիս «եօթն եղբայրներով մի ազգատոհմ», որ երկար թափառելուց յետոյ գալիս է Մուշ: Երկու եղբայրը գնում են Էրզրում, շատ հարստանում և հռչակ ստանում. սոքա տեսնելով հարըստահարող թուրքերին, դռան ներսի շէմում մի շատ մեծ հոր փորեցին և եկողին այնուհետև հորի մէջ էին գլորում: Մրգոն շարունակ դռան առաջ նստած էր լինում և պատահած տաճիկ հիւրին իր փոքրիկ եղբօրը՝ Գրգոյին յանձնելով ասում էր. «Տղայ լաօ, «Թ ըլ Հ ո ր ի կ»: Այս անունով էլ կոչւում են եղբայրներն ու իրենց տունը. հօրը լցնելուց յետոյ՝ էշերը թարս նալելով և իրենց չարուխները թարս հագնելով—մի ժամանակ սասնեցոց թարս չարուխ էին ասում—գալիս են Մուշ, և յետոյ Սասունում մի գիւղ են հիմնում Թըլ-Հորիկները, որ այժմեան Թըլորիկ կամ Տալւորիկն է: